

## ԼԵՎՈՆ ՇԱՍԹԻ ԿԵՆՍԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՅՈՒՐԻ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

XX դ. հայ մշակույթը հարուստ է վառ անհատականություններով, հատկապես՝ գրականության և արվեստի բնագավառում: Եվ այդ անհատականությունների շարքում իր բացառիկ տեղն ունի Լեոն Շանթը՝ գրող, գրամագուրգ, մանկավարժ, փիլիսոփա և քաղաքագետ միաժամանակ: Մակայն մինչև այսօր գեռես ըստ պատշաճի ուսումնասիրված չէ նրա գրական հարուստ ժառանգությունը, առավել ևս նրա փիլիսոփայական, գեղագիտական, մանկավարժական հայացքները: Մինչդեռ դրա անհրաժեշտությունն այսօր մեծ է ոչ միայն այն պատճառով, որ միանգամայն ինքնատիպ է նրա փիլիսոփայությունը, այլև որ ուսուցողական է և դաստիարակող...

Լ. Շանթը ծնվել է 1869 թ. Կ. Պոլսում: Խմական ազգանունը՝ Նահաշպետյան է: Վարժարանում ուսանելու տարիներին հոր՝ Սեղբոս անվան հիմքի վրա նրան տրվել է Սեղբոսյան ազգանունը: 1884–1891 թթ. ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա կրթությունը շարունակել Գեղմանիայում՝ Լայպցիգի, Ենայի և Մյունխենի համալսարաններում, խորանալով՝ հատկապես մարդաբանության, փիլիսոփայության, պատմության, մանկավարժության և հոգեբանության բնագավառներում, որպես ուսուցիչ ունենալով՝ նշանավոր բնագետ, հոգեբան և փիլիսոփա Վիլհելմ Վունդտին (1832–1920): Շանթը վերադարձավ Կ. Պոլիս հեղափոխական շարժումների վերելքի օրերին և աշխատանքի անցավ Ռոդոսիթոյի վարժարանում որպես տնօրեն: Գևորգյան ճեմարանի ազգային մթնոլորտը, Կովկասում ծավալված հասարակական-քաղաքական շարժումները ձևավորեցին նրա աշխարհայացքը, բնական է, որ նա չէր կարող անտարբեր մնալ իր շուրջն ընթացող իրադարձությունների հանդեպ: Հետագայում, անդրադառնալով՝ այս շրջանի իրադարձություններին, նա գրում է. «Գիտակցության եկած օրեմ կապված էի, անշուշտ, մեր հեղափոխական շարժումներուն, դեռ Գևորգյան ճեմարանեն: Իմ բոլոր ընկերներս, ծանոթներս, իմ սիրելի մոտիկ մարդիկները այդ շարժման մեջ էին, և ես մոտիկեն ծանոթ էի ներսի, դուրսի բոլոր կատարվածներուն: Բայց ինքս գիտակցար մեջը չէի մտած: Ես իմ վրա նայած եմ միշտ իբրև գոչի մարդու և հեղափոխությունը նկատած եմ միշտ իբրև զենքի գործ, ես այդ զենքը չեմ գործածեր, պետք չէ որ մտնեմ զենքով քարոզողներու մեջ»<sup>1</sup>: Այնուամենայնիվ, չնայած իր «գոչի մարդ» մնալու դիրքորոշումին, «թրքամիտ առաջնորդի մը մատնությամբ» Շանթը դարձավ կամածելի և դիմեց փախուստի. «Պոլսեն անցավ Կովկաս և անկե հաջողեցավ անցնիլ արտասահման ուսանելու, հույսը դրած իր գոչին և իրեն խոստացված նյութական

<sup>1</sup> «Հայրենիք», 1960, № 4, էջ 28:

համեստ միջոցներուն»<sup>2</sup>: Հեղափոխական իրադարձությունների զարգացումները հետագայում փոխեցին նրա դիրքորոշումը, և 1909 թ. Շանթն անդամագրվեց Դաշնակցությանը՝ գրական գործունեությունը համատեղելով՝ քաղաքական գործունեության հետ: Ավելի ուշ, 1923 թ. գրած «Մտավորականություն և կուսակցություն» աշխատության մեջ վտարանդի մտածողն իր գավանանքի մասին գրում է. «Կրնաս եղած կուսակցություններեն ոչ մեկուն չպատկանիլ, բայց այն ատեն պետք է բարձրացնես քու սեփական դրոշակդ, պետք է հրապարակ գնես քու կուսակցությունդ դիցուք միայն քանի մը հետեւորդներով, դիցուք և միս մինակ: Մտավորական մը պարտական է միշտ մասնակցիլ հանրային ղեկավարության գործին ու մտածումին. հակառակ պարագային կդառնա դասալիք մը մտավորականի իր կոչումեն ու պարտավորութենեն»<sup>3</sup>:

Առաջին հանրապետության իսրադարանի ամենաակտիվ գործիչներից մեկն էր, որոշ ժամանակ նաև՝ խորհրդարանի նախագահը: Ակտիվորեն մասնակցեց ազգային պատվիրակության Մոսկովյան բանակցություններին; 1920 թ. դեկտեմբերի իրադարձություններից հետո բազմաթիվ մտավորականների հետ Շանթը նույնպես բանտարկվեց: 1921 թ. փետրվարյան իրադարձություններից հետո ազատվեց բանտից և բազմաթիվ մտավորականների, քաղաքական և ռազմական գործիչների հետ, Պարսկաստանի վրայով, հեռացավ Հայրենիքից, նախ՝ Ֆրանսիա, ապա Եգիպտոս, վերջնականապես հաստատվելով Բեյրութում, որտեղ Նիկոլ Աղբալյանի գործուն մասնակցությամբ հիմնադրեց Բեյրութի «Հայ ճեմարանը»: Հետագայում նա հաճախ էր հիշում իր բանտարկությունը և ամբողջ կյանքում չմոռացավ բանտապահ այն հայ երիտասարդ զինվորին, որը կոպտորեն հրում էր իրեն և ամեն անգամ այդ իրադարձությունները հիշելիս կրկնում էր, թե մահը շատ ավելի նախապատվելի էր այդ օրը:

Շանթն այն բացառիկ արևմտահայերից էր, որ բախտ ունեցավ ուսանելու էջմիածնի հոգենոր ճեմարանում, որտեղ այդ տարիներին իշարս այլոց ուսանում էին նաև Կոմիտասը, Ն. Ադոնցը, Ն. Աղբալյանը, Վուամյանը և ուրիշներ: Հոգենոր ճեմարանի մթնոլորտը հայկականության իր դրոշմը դրեց Շանթի պատանեկան հոգու վրա՝ Այստեղ նա ճանաչեց իր հայրենի բնաշխարհը, ծանոթացավ ժամանակակից ոռուսական դրականությանն ու քաղաքական շարժումներին, և, ինչպես նկատում է իր բարեկամներից և ժամանակակիցներից մեկը՝ Գ. Իփեկյանը, «Հոն զգաց իբրև հայ իր պարտականությունը նվիրվելու հայ ժողովուրդի ծառայության» և «Հոն է որ ինք դարձավ ամենեն արևմտահայ արևելահայը և ամենեն արևելահայ արևմտահայը. մեկ խոսքով ամբողջական հայը. միաժամանակ և լայնախոհ հայը. հավասարապես սիրող ու գնահատող այդ բոլորին արժեքներն ու արժանիքները»<sup>4</sup>: Առաջին հանրապետության գոյության տարիներին սուր էր հատկապես «արևելահայ» և «արևմտահայ» հակադրությունը, որը վճռականորեն մերժում էր Շանթը և, ինչպես նկատում է Ս. Վրացյանը, վնասակար էր համարում նույնիսկ դրա արժարծումը: «Ի՞նչ արևմտահայ,

<sup>2</sup> Գ. Ի փ է կ ե ա ն. Շանթի գրական վասակը. – «Ակոս», 1952, № 2-3, էջ 42:

<sup>3</sup> Լ. Շանթի երկերը. Հ. 5, Պեյրութ, 1948, էջ 143:

<sup>4</sup> Գ. Ի փ է կ ե ա ն, նշվ. աշխ., էջ 40:

ի՞նչ արևելահայ մի՛այն հայը բավական չէ՞: Մարդը փնտուեցե՛ք, անհատի արժեքը գործի համար և ո՛չ թե ծննդավայրը...»՝ հաճախակի կրկնում էր նա:

І. 72наанії аշխавар հայացքը վերջնականապես ձևավորվեց գերմանական համալսարաններում և եվրոպական փիլիսոփայական և գեղագիտական դրականության ազդեցության տակ: Մի կողմից հոգեոր կրթություն և հոգեոր դաստիարակություն Գևորգյան ճեմարանում, իսկ մյուս կողմից եվրոպական համալսարանական գիտությունն ու փիլիսոփայությունը «Երկատեցին» Նրա էությունը: «Երկատվածությունն», ընդհանրապես հատուկ է բոլոր մարդկանց և առավել սուր դրամեորումներ է ստանում Մեծ անհատականությունների մոտ: Ֆ. Նիցշեն իր «Երկրորդ Ես»-ին բացահայտեց բավականին ուշ, երբ արդեն երեսուն տարեկան էր, մինչդեռ Կ. Յունգն իր «Երկրորդ Ես»-ին բացահայտեց դեռևս մասնուկ հասակում: Մեզանից յուրաքանչյուրն ապրում է այդ «Երկատվածությունը», բայց, քանի որ նման երկատվածությունն ընդունված չէ հասարակության մեջ, շատերը թաքցնում են իրենց իսկական էությունը, իրենց «Երկրորդ Ես»-ը և համառորեն փորձում են լրել նրա մասին: Մինչդեռ Նիցշեն, գուցե և անզգուշաբար, բայց նաև միանգամայն պարզուոց խոսում է այն ամենի մասին, ինչի մասին գուցե և չպիտի խոսեր, որովհետև հասարակությունը դեռևս պատրաստ չէր այդ խոսակցությանը: Խոսելով Նիցշեի մասին, Կ. Յունգն իր «Հիշողություններ»-ի մեջ գրում էր. «Ինչ-որ հիվանդադին անհասկացություն կար նրանում, որ Նիցշեն առանց սարսափի և ոչինչ չկասկածելով իր «Երկրորդ Ես»-ին հնարավորություն տվեց աշխարհի հետ խոսելու այնպիսի բաների մասին, որոնք աշխարհը չգիտեր և չէր էլ ուղղում իմանալ: Նա մանկան նման հավատացած էր, որ գտնելու է նրանց, ովքեր կիսում են իր համարակալվածությունը և ընդունելու են «արժեքների վերարժեվորման» իր տեսությունը... Փոխարենը նա հայտնվեց ողբերգական միայնության մեջ, բոլոր նրանց նման, ովքեր չհասկանալով իրենց գանձարանի բաղում են տգետ ու աղքատ ամբոխի առաջ»<sup>6</sup>:

«Երկատպած» էր նաև Շանթի հությունը: Համենայնդեպս, այդ է վկայում ինչպես Վանահայրն, այնպես էլ Արեգան «Հին աստվածներ»-ի մեջ, որի մեջ Շանթը դրել է իր հությունը, որի մասին կխոսենք՝ ստորև: Այդ է վկայում նաև Գ. Նարեկացու և նրա «Մատյան»-ի շանթյան ըմբւնումն ու վերլուծությունը... Այս երկույթը լավ է նկատել հատկապես նրա աշակերտներից և մերձակոր բարեկամներից մեկը՝ Գ. Շահինյանը. «Առջասարակ խորհրդավոր բան մը ունեին Շանթի բնազանցական, վիլխսովիայական միտքերը: Իր կյանքը երկվություն մըն էր եղած սկիզբեն իսկ. երազող բանաստեղծ սլատանի՝ հմայվեր էր գիտության խելացնոր առաջադիմութենեն, նետվեր՝ անոր ոլորապտույտին մեջ, առանց դադրելու նախկին երազովը ըլլալե: Գեղրդյան ճեմարանի կրոնական շունչը և գերմանական համալսարաններու դրապաշտ իմաստափրությունը տարօրինակ կերպով

<sup>5</sup> Ս. Վ. լուսագետն. Շանթի հետ. - «Ակոս», 1952, № 2-3, էջ 21:

<sup>6</sup> К. Г. Юнг. Воспоминания, сновидения, размышления. М., 1998, с. 134. *Цит. по: машины альбумы сновидений и памяти прошлого, в том числе и о будущем*. З. П. Фишер. 2001, № 33–36.

Հյուսվեր էին իրարու»: Այդ «երկվությունը» ճակատադրական եղավ նրա համար: Այնտեղ, որտեղ «խորհողը, բանաստեղծը, տեսանողը թափ են առեր, սլացեր գեպի վեր դիտնականը սանձեր է սլացքը: Հոն ուր դիտնականն է գործի սկսեր գեղարվեստադետն է միջամտեր, գիտության շիտակ, բայց չոր վերացականությունը քիչ մը արվեստով թարմացնելու: Եվ Շանթէ չէր եղած կատարյալ գիտնական, չէր եղած նաև կատարյալ այն արվեստագետը, որ կրնար ըլլալ»<sup>7</sup>: Երկվության այդ զգացումը խորապես ապրեց նաև Շանթի մեծ բարեկամը՝ Նիկոլ Աղբալյանը: Նա իր մասին հաճախ էր ասում, որ «հեղափոխական շարժումը գուրս հանեց ինձ իմ ակոսից: ...Սուրբ չթողեց որ երգիչ դառնամ, երգը չթողեց որ մարտիկ դառնամ»<sup>8</sup>: Եվ եթե ասվածը որոշ առումներով իրավացի է Ն. Աղբալյանի նկատմամբ, որքանով նա իսկապես կարող էր դառնալ մեր իրականության մեծագույն դրագետներից մեկը, այն ճիշտ էր նաև Շանթի առնչությամբ, որովհետև նա կարող էր մեծ լինել և՛ որպես արվեստագետ, և՛ որպես գիտնական, և՛ որպես քաղաքական և ազգային գործիչ, թույլ չտալով սխալ մոտեցումներ, ինչպես հայ եկեղեցու մասնատման, այնպես էլ խորհրդային Հայաստանի հանդեպ ունեցած իր «անբարյացկամ» վերաբերմունքով, թեկուզ և դա բխում էր իր համոզմունքներից: Քանի որ նա իր հասարակական-քաղաքական հայացքներով «համոզված հակառակորդ մըն էր համայնավարության, ու չերմ ջատագով մը ժողովրդավար սկզբունքներուն»<sup>9</sup>: Հոդեկան նման «երկատումն», անկասկած, ունի նաև որոշակի օբյեկտիվ հիմք Հայկական բարձրավանդակի հակասականությունը: Անդրադառնալով այս խնդրին, Հ. Ասատրյանը նկատում է, որ Հայկական բարձրավանդակը կազմված է հովիտներից, անդնդախոր ձորերից ու հսկայակարկառ լեռնաշղթաներից, որոնցից յուրաքանչյուրն իր կնիքն է գրել Հայի հոգեկանի ձեռագործան վրա. «Հովիտական ապրումը հային պարզել է իգեալիստական ոգեաշխարհ. կիրճերի և լեռների զգացումը՝ դրան միացրել է խորհրդապաշտական երանդը: Հայ ոգում իգեալիստական և խորհրդապաշտական դժերն այնպես են խառնվել իրար, ինչպես մեր աշխարհում միմյանցով պայմանավորվող հովիտը, կիրճը և լեռը»<sup>10</sup>:

Խոսելով Լ. Շանթի կյանքի և գործունեության փոխհարաբերության և փոխադարձ կապի մասին, Մուշեղ Խիսանը գրում է. «Մարդեր կան սակայն, որոնց գործը կարելի չէ բաժնել իրենց անձեն: Լ. Շանթը այս խումբին կը պատկանի. Իր գլուխ գործոցը ոչ «Հին աստվածներ»-ն է, ոչ ալ «Կայսր»-ը. այլ իր իսկ անձնավորությունը, որ քար առ քար բարձրացած, ամբողջացած և գեղեցկացած ստեղծում մը կը ներկայացներ: Իր հոդիին պես՝ Լ. Շանթի գրականությունն ալ հարատես վերելք մը եղաւ...»

Աստիճանական վերելքի այս ճամբուն վրա, որքան իր անձը կատարելադրձվեցավ իբրև մարդ, նույնքան և իր գրականությունը հարստացավ իբրև արժեք»<sup>11</sup>: Եվ դա միանդամայն բնական է, որովհետեւ, ընդունված

<sup>7</sup> Գ. Շ ա հ ի ն ե ա ն. Տպաւորութիւններ Լեւոն Շանթէն. – «Ակոս», 1952, № 2–3, էջ 215:

<sup>8</sup> Մ. ի շ ի ա ն. Երեք մեծ հայեր. Պեյրութ, 1952, էջ 45:

<sup>9</sup> Գ. Շ ա հ ի ն ե ա ն. նշվ. աշխու., էջ 212:

<sup>10</sup> Հ. Ա ս տ ը յ ա ն. Աղթնացիր, հայ մարդ. Երևան, 1998, էջ 39:

<sup>11</sup> Մ. ի շ ի ա ն. նշվ. աշխու., էջ 70:

ճշմարտություն է, որ ինչպիսին մարդն է, այդպիսին էլ նրա փիլիսոփայությունն է, որովհետև հեղինակը չի կարող իր ստեղծագործությունների մեջ դնել մի բան, որը չկա իր հոգու մեջ: Հետևաբար, յուրաքանչյուր հեղինակի ստեղծած գրական հերոսը անպայմանորեն հանդիսանում է նրա հոգեգծերի այս կամ այն կողմի արտահայտողը: Այդ են վկայում, հատկապես, Շանթի «Հին աստվածներ» ստեղծագործության հերոսները՝ Վանահայրն ու Աբեղան: Գ. Շահինյանը, որը սերտ հարաբերությունների մեջ էր Լ. Շանթի հետ, իր «Ծպավորությունների» մեջ գրում է. «Եվ Աբեղան ու Վանահայրը միշտ ներկա էին Շանթի հոգին մեջ. ճիշդ է. իր կյանքի հաջորդական երկու շրջանները բնորոշող տիպարներն են անոնք. բայց Վանահայրը Շանթը գոյություն ունեցած է նաև պատանության շրջանին, ինչպես Աբեղանը Շանթը՝ հասունության ու ծերության»<sup>12</sup>: Առեղայի նման կենսախինդ ու երազող և Վանահայր նման խոհեմ անապատական միաժամանակ, համոզված, որ մարդու «վերթելումը» վախճան չունի, որ կյանքի ընթացքը հավերժական վերելք է ենթադրում, որտեղ գործում է հավերժական կառուցման ու «քանդումի» սկզբունքը, որը երբեք չի ավարտվում, որովհետև Աստծո տաճարն ավարտ չունի, քանի որ «հենց որ ավարտի ալ տաճարը չէ Աստծու, այլ կոաստուն»:

XIX դ. վերջի եվրոպան հիշեցնում էր ընկերային և հասարակական տարրեր քաղաքաբանների և տեսությունների մի յուրատեսակ խառնարան: «Դարասկզբի անհատապաշտ տեսություններն ու սկզբունքները եղայրության, հավասարության և ազատության դիմակին տակ սքորված արդեն կորսնցուցեր էին իրենց հմայքը»<sup>13</sup>, — գրում է Իփելյանը: Բազմատեսակ ընկերվարական հոսանքներ վերջնականապես հանդել էին Մարքսի ու Էնգելսի դասակարգային պայքարի տեսությանը, որոնք նույնպես իրենց կնիքը դրեցին Շանթի աշխարհայացքի ձևավորման վրա: Այլ խնդիր է, թե թուրքահայ իրականության մեջ որքանով էր իրականանալի ընկերվարականության գաղափարների իրագործումը կամ հնարավոր էր ընդհանրապես: Մուշեղ Եպիսկոպոսը բերում է Այտըր Լուիզի միտքը՝ ուղղված արևմտահայ քաղաքական գործիչներին. «Դուք առայժմ սոսիալիզմի վարդապետության ուսուցումին պետք չունիք բնավ, որովհետև քաղաքակրթությունն է, որ կը պակսի ձեր երկրին մեջ: Եթե ես հայ ծնած ըլլայի ու Թուրքիայի մեջ ապրեի, ներկայիս պիտի լուեի և սոսիալիզմը բառը բերանս իսկ պիտի չառնեի: Այդ երկրին մեջ տիրող ներկա պայմաններուն տակ՝ սոսիալիզմը քարոզելը կը նմանի քարե սալահատակներու վրա սերմ ցանելուն, և վայ անոր, որ քարի վրա սերմ ցանելով հունձքի պիտի սպասե»<sup>14</sup>: Սակայն հայ քաղաքական գործիչներն ամենևին չէին մտածում այս հանգամանքի վրա և տարված համաշխարհային հեղափոխության և «սոցիալիզմի» գաղափարներով, ամենևին չէին ուղղում լսել անդամ պայմանների բացակայության կամ հանդամանքների ոչ բարենպաստության մասին: Ավելին, որպես հակակշիռ նման մտածողության առկայության առաջ էին

<sup>12</sup> Գ. Շ ա հ ն ե ա ն. նշվ. աշխ., էջ 215:

<sup>13</sup> Գ. ի փ է կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 43:

<sup>14</sup> Մ. Ե պ ի ս կ ո պ ս ս. «Ընկերաբանական» նոր մարզանքներուն առիթով. — «Ազատարարություն», 16.XVI.1910:

քաշում թուրքական իրականության չիմացությունը: «Իրողությունն այն է, որ մեր երկրին մեջ դոյություն ունի բանվորություն մը...», — հայտարարում էր Ռ. Դարբինյանը և ավելացնում, որ վերջապես «Սոսիալիզմը ամբողջ աշխարհայացք մըն է, որ կը զբաղի ոչ միայն տնտեսական հեղաշրջման վրոպլեմով, այլ և հասարակական կյանքի բոլոր երևոյթներով, երեսներով»<sup>15</sup>.

Շանթի աշխարհայացքի ձեւավորման վրա մեծ է հատկապես գերմանական մշակութիւն և գերմանական նորագույն փիլիսոփայության ազգեցությունը, ի դեմս Ֆ. Նիցշեի փիլիսոփայության, իր ծայրահեղ «անհատապաշտ» հիմքով, ուժապաշտության և Գերմարդու տեսությամբ, որին դալիս էին լրացնելու Հ. Իբսենն իր թատերգություններով և Ռ. Վադներն իր երաժշտությամբ: Այսինքն, փիլիսոփայությունը, գրականությունը և գեղարվեստն ու դիտությունը թև թևի տված հայտարարում էին ուժեղ կամքի տեր անհատի ծնունդը, ծնունդը Գերմարդու, որը մի տեսակ կիսաստված էր կամ պիտի դառնար: Խոսելով Լ. Շանթի մասին, Գ. Իփեկյանը դում է. «Իր պայմանադրական կեղծիքի դեմ ըմբոստացումով Նիցշեական էր, իր անխնա ճշմարտության ճգտումով Իբսենական, իր որոնող ու ճդտող Հոգեբանությունով հայ էր»<sup>16</sup>: Անհատապաշտ դպրոցը ճգտում էր ի հայտ բերել ճշմարտությունը և վերջ դնել ամեն տեսակի կեղծիքներին և պարտադրված պայմանադրական կաշկանդումներին, որոնք «կը ծառայեն միայն մարդը մանրացնելու, աղճատելու և դարձնելու դառնացած էություն մը, թևաթափ և անկարող մեծ թոհչքներու, և դատապարտված միայն գետնաքարչ սողոսկումներու»<sup>17</sup>, — գրում է Իփեկյանը: Մարդը վեր է կանգնած ամեն տեսակի պայմանականություններից: Մարդը կարիք ունի իրական ազատության: Նա ցանկանում է հաղթահարել իրեն կաշկանդող կրոնական և բարոյական բոլոր շղթաները: Նա ճգտում է դեպի վեր, դեպի բարձունքները. «Ամեն ինչ կամ ոչինչ»՝ աշա նրա հիմնական սկզբունքը, որը կարող է նրան երջանկություն պարդեել: «Ամեն ինչ» ունեցողը գորավոր մարդն է, իսկ ամենազորավորը՝ «Մինակ մարդն է», հայտարարում է Իբսենի հերոսը՝ գոկտ: Շտոկմանը: Այս դաղափարախոսությունը հարազատ է Լ. Շանթի կենսափիլիսոփայությանը, որով և պայմանավորված է «Տոքթ. Շթոքմանի» սեփական թարգմանությունը, չնայած այն հանդամանքին, որ այն արգեն թարգմանված կար:

Լ. Շանթի փիլիսոփայության հիմքում ընկած է կյանքը: Կյանքն այնպես, ինչպես որ կա, առանց լրացուցիչ դունավորումների, հնարավորինս պարզ և ճշմարիտ: Եվ չնայած իր կրած բազմաբնույթ ազգեցություններին, այնուամենայնիվ, նրա փիլիսոփայությունը բխում է կյանքից: Խոսելով նրա փիլիսոփայության մասին, Մ. Իշխանը դրում է. «Գրքունակ և սորված փիլիսոփայություն մը չէր իրը, այլ բնությունը դիտելով, բնություննեն հանլած դրական մտածելակերպ մը...» Նրա ըմբռնումով «կյանքը կոիվ է, մաքառում, ճգտում, բարձրացում: Ցուրաքանչյուր հանդրվանեետք նոր բարձունք մը կը պարզվի մեր առջեւ: Պետք է անվերջ կռվիլ և

<sup>15</sup> «Ազատամարտ», 17.VI.1910:

<sup>16</sup> Գ. Ի. Փ. է կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 52-53:

<sup>17</sup> Խույն տեղում, էջ 44:

անվերջ առաջանալ՝ առանց ետ նայելու։ Տկարները, տատամսողները, ուշացողները ոտնակոխ կ'ըլլան։ Կարեորը մեր նվաճած հանգրվանները չեն, այլ այն պայքարը, որ կը մղենք նպատակի ճամբուն վրա»<sup>18</sup>։

Ճշմարտությունը պահանջում է, որ մենք վեր կանգնենք ամեն տեսակի արժեկումներից, համակրանքի և հակակրանքի զգացումներից, որը ֆ. Նիցշեն բնութագրում է «բարուց և չարից անդին» բանաձևումով։ Անկասկած, Նիցշեի, իբրև նիցշենի տեսությունները յուրատեսակ ընդվզում-ըմբոստացումներ են հասարակության մեջ տիրապետող արժեքալին համակարգերի, ինչպես նաև որպես ծշմարտություններ ընդունված կեղծիքների հանդեպ։ Եվ քանի որ *XIX* դ. վերջի - *XX* դ. սկզբի հայ իրականության մեջ տիրապետող արժեքներ պարզապես դլխիվայր էին ներկայացված, Շանթի համար ուժապաշտ փիլիսոփայությունը դարձավ այն միջոցը, այն զենքը, որով նա փորձեց վերափոխել Ռւժի և Բարու մասին հայ իրականության մեջ արմատակալած սխալ պատկերացումները։ Նախորապես հավատացած էր, որ ամեն կարգի նախապաշարումներից և մարդկային տկարություններից անհատի աստիճանական ազատագրման շնորհիվ կարելի է հասնել մարդկային հասարակության, մասնավորապես, հայ հասարակության բարձրացմանը։ Չնայած պատմությունն առանձին անհատների պատմությունը չէ, այնուամենայնիվ Շանթը համոզված էր, որ պատմական անհատներն են, որ բարձրացնում են մարդկությանը, և լինելով եվրոպական ընկերվարական հոսանքների ազդեցության տակ, այնուամենայնիվ, բացառիկ էր նաև ընկերվարական իր ըմբռնումների մեջ, մնալով անհատապաշտ ընկերվարական։ Ընդունելով հավասարության, ազգատության և եղբայրության իդեալների անհրաժեշտությունը, միանույն ժամանակ հասարակական առաջընթացի համար կարեռում էր ազատադրումը մարդկային անհատի հոգու մեջ թաքնված «ներքին թշնամիներից», «որոնք ոչ թե դիրք բռնած էին փողոցի մը անկյունը, այլ՝ դարան մտած նույնինքն անհատի հոգին մեջ»<sup>19</sup>, - գրում է Օ. Թոփուզյանը։ Իր «ներքին թշնամիներին», «ներքին բռնակալներին», այսինքն սեփական թուլություններն ու պակասությունները հաղթահարած անհատն է, որ կարող է բարձրանալ դեպի ինքնակատարելագործման բարձունքները։ Ճիշտ է, Աստված է ստեղծել ինչպես բնությունը, այնպես էլ մարդուն։ Ընդ որում, մարդուն նա ստեղծել է ոչ միայն իր պատկերով, այլև իր նմանությամբ։ Սակայն դա ամենակին չի նշանակում, որ Աստված ավարտել է իր գործը։ «Բայց ո՞վ ըսակ ձեզի, թե Աստված ալարտեր է արդեն իր ստեղծագործությունը։ Զե՞ք տեսներ ի՞նչ վայրի ու վայրիվերո արարչություն, և մենք բոլորս ի՞նչ թշվառ ու հակասական արարածներ։ Ո՞չ, դուք դեռ մարդ չեք, դուք դեռ այն մարդը չեք, որ Աստված ստեղծել կուդե։ Դուք դեռ մարդու մել նախնական նմուշն եք միայն։ Աստծու առաջին փորձերը անասունն մարդ ստեղծելու»<sup>20</sup> (ընդդժ.՝ Յու. Հ.), - ասում է Շանթի հերոսը։

<sup>18</sup> Մ. ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 79։

<sup>19</sup> Օ. Թ ո փ ո ւ զ ե ա ն. Լեռոն Շանթի աշխարհայեցքը. - «Ակոս», 1952, № 2-3, էջ 87։

<sup>20</sup> Յ. Շ ա ն թ. Երկեր. Երևան, 1989, էջ 564։

Բնականաբար, ինչպես Ֆ.Նիշշեի, այնպես էլ Հ. Շանթի համար մարդը հսնղես է դալիս ոչ թե որպես նպատակ, ինչպես ընդունում էին XVIII-XIX դդ. լուսավորիչները, այլ որպես ոչ չուզ ավելի կատարյալ «իւեալ մարդու», կամ ինչպես Ֆ.Նիշշեն է ընութեղբում՝ Գիրմաբուռ ստեղծման համար. «Ի՞նչն է մարդու մեջ մեծ որ նա կամուրջ է և ոչ նպատակ... Մարդը լար է ծղված կենդանու և գերմարդու միջև, – լար անդունդի վրա»<sup>21</sup>. Ինության մեջ դործում են զարդացման օրենքները, որոնց շրջանակներում բոլոր էակները մինչև այժմ ստեղծել են ավելի կատարյալը, որը գիրագանդում է իրեն: Բնականաբար, այդ օրինաչափություններին հետևելու է նաև մարդը. նա նույնպես պարաւագոր է «մի բան սաեղծել իրենից վեր»... Հետեաբար, յուրաքանչյուր սերնդի առաջ հրամայաբար դրվում է նույն հիմնահարցը գուռք ի՞նչ եք արել մարդուն հաղթահարելու համար, իսկ հսկայթահարելու խնդիրն առկա է, որովհետև ձեղանից յուրաքանչյուրն անցել է «ճանապարհը ճիճվից մինչև մարդ, բայց ձեր մեջ դեռևս ճիճու է շատ բան: Երբեք դուք կապիկ էիք, և նույնիսկ դեռ հիմա մարդը ավելի կապիկ է, քան որևէ կապիկ»<sup>22</sup>, – հայտարարում է նիշշեի Զրադաշտը:

Ի՞նչ է կյանքը, որին այնքան մեծ խորհուրդ, բովանդակություն և իմաստ ենք տալիս: Ընդամենը մի «Փսս» է, անհատական և անկրկնելի, որը փորում է մեղանից յուրաքանչյուրն իր ծնված օրվանից մինչև իր կյանքի վերջը, փորում է սեփական եղունգներով, ուղեղով և սրառվ: Այդ եզրակացությանն է հանգել «Հին աստվածների» Ճգնավորը: Նա, որ թողել է իր թագավորությունը, իր վայելքներն ու զվարճությունները, իշխանությունն ու փառքը և վանականի սքեմը հարգած՝ իրեն նվիրել է ապաշխարհական քարոզչությանը, որովհետև «Ունայնությունն ունայնությանց» է համարել աշխարհիկ բոլոր վայելքները: Սակայն Ճգնավորի հոգին իր Անտպատում նույնպես չի խաղաղվել, որովհետև նա հանդել է այն տիտուր Եղիսակացությանը, որ Ունայնությունն է նաև այդ տիմենը: Միակ իրականությունը կյանքի դատարկությունն է, կյանքի «փոսը», որը «փորեր եմ, փորեր, նայե՛ այս եղունգներովս, ուղեղովս ու սրառվս, փորեր եմ անընդհատ ծնած օրես մինչև վերջին վայրկյանը, փորեր եմ ու որոնելու տակենքան մը գտնելու համար, կարեոր բան մը. փորեր եմ ու պաշտպաներ, որ այդչափի աշխատանքս չկորչի...», որվհետեւ դա է միակ բանը, որ «իմս է. իմ ստեղծած»: Միա՛կ բանը, այս այդ փոսը, այդ դատարկ փոսը, այդ միշտ դատարկ փոսը, որ ինչքան փորես, այնքան ավելի դատարկ կդառնա»<sup>23</sup>: Նույն խնդրի առաջ կանգնած է նաև երիտասարդ Աբեղան, որին միշտ թվացել է, թե ընտրել է կյանքի միակ նշմարիտ հանապարհը, մինչդեռ իր ասպած կյանքը նույնպես «Ունայնության փոս» է, որը լցվում է միայն երազներով, հույսերով, կարոտներով, նոր կյանքի սպասումներով, իղձերով, տագնապներով ու տենչերով, ցնուքներով ու պատրանքներով... Նրանք, ովքեր թողել են Աշխարհն ու եկել են այդ Անապատը, համոզված են, որ կյանքի նպատակը հողու կատարելագործումն է, հոգու բարձրացումը:

<sup>21</sup> Ֆ. Ն ի դ շ ե. Այսպես խոսել Զըադաշտը (դիրք ամենքի և ոչ ոքի համար). Երևան, 2002, էջ 39:

<sup>22</sup> Նույն անդում, էջ 37:

<sup>23</sup> Հ. Շ ա ն թ. ն թ. Աշվարդի էջ 384:

«Ով եկեր է հոս ինծի հետ իմ անապատս, պետք է ավելի վեր ըլլա, քան մարդը։ Իսկ չարեն թող վախնա ա՛ն, ով չի կտրեր իր բոլոր շղթաները աշխարհին հետ, իր անցյալին հետ, իր հուշերուն հետ, վշտերուն, իր ուրախություններուն... Հոս կըքեր չկան, հոս բնագդներ չկան, հոս սուրբ հոգին է միայն, հոս մի՛տքն է միայն, վեր խոյացող մի՛տքը դեպի ճշմարտությունը, դեպի Աստված»<sup>24</sup>։ Վանահայրը համոզված է, որ «տանջանքն է, որ կբարձրացնե հոգին, տառապանքն է, որ կմաքրե», և այդ հավատով է նա թողել Աշխարհն ու Կյանքը ու եկել է այս մենավոր կղզին և ամենայն զգոնությամբ պահպանում է այն, որ Աշխարհը չմտնի կղզի։ «Աշխարհը մուտք պիտի չունենա՛ այս կղզին։ Ո՛չ», – ասում է Վանահայրը<sup>25</sup>։ Սակայն կարո՞ղ է արդյոք Վանահայրը հաղթել բնությանը, երբ հրամայաբար ծառանում են բնության օրենքները... Աշխարհից ու Կյանքից հեռացած վանականներին գրեթե ամեն գիշեր այցելում են պատրանքները, «գորշ սավանին մեջ փաթթված կնկա մը սկես», գալիս են խմբերով, գալիս են գինեպան Ուսեփի, գրացի Գափոյի, շվի փչող կույր Ակոբի, տհոլ զարնող Մինասի կերպարանքով՝ ձեռքերին գինի, օղի, ուտելիքներ, խորոված, գալիս են, ինչպես ծարավի աչքին՝ ջուրը ու չեն հեռանում, մինչեւ չես տալիս ծիրամոր անունը... Սակայն, ինչպես խոստովանում է ծիրացուն, «Հակառակի պես ալ, կարծես, մտքես կդողնան ծիրամոր անունը. կփնտրեմ, կփնտրեմ, հա՛, հա՛, լեզվիս ծայրն է, բայց չեմ կրնար ըսել՝ «Սուրբ կույս Մարիամ»<sup>26</sup>։ Գալիս են ուրպականների նման ու գիշերն ամբողջ տանջում են վանականներին և առավոտյան ծծումքի ծխի պես բարձրանում՝ ու առաստաղի գերանների արանքում անհետանում... Իզուր են Վանահոր ջանքերը, փորձերը՝ ապարդյուն։ Աշխարհն իր վայելքներով, իր ուրախություններով, իր կրքերով ու ցանկություններով մտել է կղզի և ահա եկել է Աբեղան Վանահորն ասելու, որ Հին աստվածները մեռած չեն, Հին աստվածները կան, որ «...կյանքի մեհյանը խորտակում չունի, ինչպես և ինքը կյանքը»<sup>27</sup>։ Իսկ կյանքը անընդհատ պայքար է, անընդհատ մրցակցություն է և անընդհատ վերելք... «Ամեն մարդ ինք պիտի բանա իր ճամփան», – ասում է Վանահայրը։ Յուրաքանչյուրը մղում է իր պայքարը, յուրաքանչյուրը սլայքարում է հանուն իր Ազատության և որոնում է իր Ազատությունը և ոչ թե Ազատությունն ընդհանրապես։ «Սուրբ է, ազատությունը գուն կփնտրես քեղի համար, միայն քեղի։ Ուրիշի ազատությունը քու շղթան է»<sup>28</sup>, – Սարտրի հերոսի նման և նրանից շատ ավելի վաղ հայտարարում է «Ծղթայված»-ի Հարճը։ Մեղ համար ազատությունը որոնելով, միկնույն ժամանակ մենք բռնանում ենք ուրիշների վրա, սահմանափակելով ուրիշների ազատությունը, բնականաբար, եթե մարդն ազատություն է ուզում, եթե ուզում է հրաժարվել իր շղթաներից, պարտավոր է նաև ընկճել իր կրծքի տակ նստած բռնակալին։ «Եթե կուզե՞ք, որ փրթին ձեր բոլոր շղթաները, ընկճեցե՞ք այն բռնակալը, որ կտիրե ձեզմե ամեն մեկուն կրծքին տակ, մեռցուցեք ձեր մեջի բռնակա-

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 375:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 362:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 374:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 361:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 561:

լր»<sup>29</sup>: Միայն այս դեպքում է հնարավոր ազատության իրականացումն ընդհանրապես: Միայն այս դեպքում է մարդը դառնում իսկապես ազատ: Շանթը հանգել է այն եղրակացությանը, որ մեր անկախության ու ազատության կորստի, մեր ստրկական ու արհամարհված գոյության պատասխանատուն նաև մենք ենք. «Մենք ենք, որ շղթաներու տակ կպահենք անհնազանդ որդին, այն ըմբոստ հոգին, որ ճկվիլ չուզեր Աստծու կամքին»<sup>30</sup>:

Կյանքն անընդհատ պայքար է, անընդհատ վերելք է, մաքառում, ձգտում ու բարձրացում: Յուրաքանչյուր հաղթահարված բարձունքից հետո գալիս է մի նոր բարձունք, հետևաբար, «պետք է անվերջ կռվել ու անվերջ առաջանալ, առանց ետ նայելու», առանց նահանջի: «Ու ես ահա կը-սիմ ձեղի: Ամրացուցե՞ք ձեր ոտքերուն կամիչները, պնդեցե՞ք ձեր գոտին ու ձեր սրտերը: Դեռ երկար, դեռ շատ է երկար այն ճամփան, որ քալեք պիտի: ...Բարձրացե՞ք եք դուք բարձր սարերը, մադլցե՞ք եք դուք ժայռ գագաթները: Ես ալ գագաթը մոտ կկարծեի: Քանի վարեն կդիտեի, մոտիկ կերևար, քանի իրեն կմոտենամ, հեռու՝ է, երկար»<sup>31</sup>, – ասում է Շանթի հերոսը և դա բնական է, որովհետև անհաղթահարելի է «նպատակի գագաթը», քանի որ այն հաղթահարելուց հետո վերածվում է սովորական մի հանդրվանի, որից սկսվում է վերելքը նոր գագաթների: «Մի՛ կենար ու մի՛ նայեր ետ, ետիդ անդունդ է: ...Վե՛ր, մադլցե վե՛ր»<sup>32</sup>: Զգտիր դեպի «ձյունե գագաթները», ինչ փոյթ, թե անկարելի է հասնելը: Ինչ փույթ, թե «բոլոր գագաթներուն ալ աս է եղածը», կարեորն այն է, որ քայլես դեպի վեր, «մնացածը բոլորովին ոչինչ է»: Կյանքի իմաստը անդուլ-անդադար ձգտումի մեջ է: Արժեզրկում են բոլոր նպատակները և դառնում են անկատար, երբ դառնում են իրականացված:

Յուրաքանչյուրն ինքն է ընտրում իր ճանապարհը: «Եթե դուք ուզում եք բարձրին հասնել, ապա օգտվեք սեփակա՞ն ոտքերից: Մի՛ թույլ տվեք ձեզ վերև տանել, մի՞ նստեք այլոց մեջքերին և գլուխներին»<sup>33</sup>, – ուսուցանում է Նիշշեի Զրադաշտը: Այդ գաղափարն է զարգացնում նաև Վանահայրը և Շանթի «Հին աստվածների» մեջ. «Կարծես կապը կիյնա աչքերես: Խ՞ոչչիս է եղեր, որ ես չեմ հասկցեր այսքան սլարզ բանը, այսքան ակնհայտնի: Մինչև հո՛ս, մինչև անապատ կրցեր ենք մենք միասին: Մինչև հոս ես կրնայի բերել ձեղի, մինչև հոս կարելի է բերել մարդը, բայց հոսկե անդին... հոսկե անդին մարդ ինքը պիտի երթաւ»<sup>34</sup> (ընդգծ.՝ Յու. Հ.): Նրանք, ովքեր արդեն հասել են իրենց նպատակին, ում բավարարում է իր ձեռք բերածը, կարող են մնալ, կարող են մտնել իրենց եկեղեցին. «Գացե՞ք, գացե՞ք ներս. ան կուտա ձերի անվերջ աղոթքներ ու մխիթարանք. ան կրանա ձեղի արքայության գոները. կազատե ձեզի բոլոր սատանաներեն, ան ձեղի ձեր հացն ալ կուտա ու ձեր հանգիստը»: Սակայն հանգիստ է որոնում միայն նա, ով հոգնել է, ում ուժերը սպառվել են արդեն, ում ե-

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 564:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 530:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 563:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 512–513:

<sup>33</sup> Ֆ. Նիցշ. Անգլ. աշխ., էջ 320:

<sup>34</sup> Լ. Շանթի. Անգլ. աշխ., էջ 429:

ըազները թեաթափ են եղել և նպատակը դարձել է իրականություն։ Վանահոր փնտրածը դա չէ։ «Իմ փնտրածս աշխատա՞նքն է, ներքին անդուլ ու անկաշկանդ որոնումը՝ ներքին անվերջ նվաճումները բարձրունքերագրունք, պարիսպե-պարիսպ, տարակույսներու անդունդներուն վրայեն, ելքերով ու անկումներով։ անդադար խոյանք մը դեպի ճշմարտությունը»<sup>35</sup>։ Նույն գաղափարն է արտահայտում նաև «Կայսր»-ի հերոսուհին։ Հաննան։ Նրա համար զոհաբերության պատրաստ երիտասարդը ցանկանում է նրա հետ միասին բարձրանալ «մինչև ձյուները, մինչև գագաթը...», մինչդեռ Հաննան մերժում է նրան։ «Չեմ ուզեր։ Ես մինակ պիտի բարձրանամ գագաթը»<sup>36</sup>, և դա ոչ միայն նրա համար, ինչպես Կայսրն է ասում, թե «Երկու հոգիի տեղ չկա՛ այսքան բարձրերը...»<sup>37</sup>, այլև, որ կամի սահման, մինչև ուր կարելի է գնալ ուրիշների հետ, կարելի է գնալ հետեւով ուրիշներին, մինչդեռ այդ սահմանից հետո յուրաքանչյուրն անցնում է իր ճանապարհը։ Առաջինը հատուկ է միջակություններին, երկրորդը՝ ընտրյալների ճանապարհն է։ Որովհետև մինչև մի որոշակի սահման բոլորի ուժերն էլ կարող են ներել, այդ սահմանից հետո է, որ զգալի է դառնում իրական ուժը։ «Ուժի ավելցուկն է ուժի ապացույցը» և ընտրյալների մենաշնորհը։ «Եվ այսպես է միշտ թույլ մարդկանց տեսակը։ Նրանք կորչում են իրենց ճանապարհներին։ Եվ ի վերջո նրանց հոգնությունը հարց է տալիս։ «Ինչի՞ համար երբեմ քայլեցինք ճանապարհներով։ Ամեն ինչ միւնույն է»<sup>38</sup>,— ասում է նիցշեն։

Կյանքն անընդհատ շարժում է ու անընդհատ պայքար։ Նրանք, ովքեր հոգնում են այդ պայքարի մեջ, իրենց դիրքերը զիջում են նրանց, ովքեր ուժի ավելցուկ ունեն ու պայքարի կամք։ Հետեւաբար, այն ո՞վ է, որ խոսում է խնայելու մասին։ «Երբե՞ք, որդիներս. կյանքի կովին մեջ չխնայեք երբե՞ք և ո՞չ ոքի։ Խնայելը թուլություն է, մեղքնալը պարտություն։ Զարկե՞ք, ով ձեր դեմն է, ով ձեր ճամփան կդոցե։ Ընդհանրացումը հստակ է։ «Ով որ քեղի կարգիլե քու թշնամիդ է»<sup>39</sup>։ Այսպես է ասում «զորության և ուժի» քարոզիչ իշխանը։ Նրանք, ովքեր նետել են իրենց զենքերն ու փախել «կյանքի կովեն», պիտի ըմբոնեն ու հասկանան, որ «Տիրոջ սեղանին վլա, ա՛յ թշվառ, ոչինչ չի ստացվիր աղաչանքով»։ Որովհետև, ինչպես Գ. Նժդեհն է բանաձևում։ «Քաշերին, միայն քաշերին է լսում և զորավեդում սլատերազմների քմահամ Աստվածը»<sup>40</sup>։ Հզոր անհատականությունների համար չկա որևէ սահման։ Յուրաքանչյուր սահման նրա համար է, որ հաղթահարվի, ինչպես ամեն ամրոց, որ պետք է նվաճվի։ «Բայց ես ատե՛ր եմ միշտ բոլոր սահմանները, թե՛ հին, թե՛ նոր»<sup>41</sup>,— հայտարարում է Օհան Գուրգենը, որովհետև հզորներն իրենք են գծում սահմանները և չեն հանդուրժում, երբ սահմանները գծում են ուրիշները։ «Քանզի բարձրա-

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 429։

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 492։

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 458։

<sup>38</sup> Թ. Նիցշեն, Աշխատական էջ 234։

<sup>39</sup> Լ. Շանթ. Աշխատական էջ 406–407։

<sup>40</sup> Գ. Նժդեհ. Հաստընտիր. Եղեան, 2001, էջ 28։

<sup>41</sup> Լ. Շանթ. Աշխատական էջ 462։

գույն մարդը երկրի երեսին նաև պեաք է բարձրադույն տեղը լինի»<sup>42</sup>, – հայտարարում է Զրադաշտը:

Անդրադառնալով Շանթի ստեղծադործությունների աշխարհայացքային խնդիրներին, Մ. Իշխանը նկատում է, որ «իր ձգտումն էր, ամեն բանե առաջ, պայքարի, հավատքի, գործի ընդունակ մարդիկ պատրաստել: Զորեղ անհատականություններ, որոնք ըլլային գաղափարապաշտ՝ առանց երազամության, և իրատես՝ առանց նյութին կապվելու: Բնության հետ հաշտ, չափազգաց, հավասարակշիռ խառնվածքներ, որոնց կամքը և նպատակը տկարություն չճանչնար»<sup>43</sup>: Այդպիսին են Շանթի դրեթե բոլոր հերոսները, բնականաբար, չի կարելի համաձայնել Ա. Տերտերյանի հետ, երբ նա Լ. Շանթին ներկայացնում է որպես «Սեռի և դասալքության երդիչ»: Հիմք ընդունելով Շանթի հերոսների սկզբնական նպատակներից հրաժարումը, ինչպես, ենթագրենք «Երազ օրերի», «Դարձի», «Դուրսեցիների» կամ «Հին աստվածների», որոնք կարողանում են ժամանակին հրաժարվել այն ճանապարհից, որն ընտրել էին որպես նորատակ, Ա. Տերտերյանը գրում է. «Դասալքը բնավորության դիսցիպլինա չունի, նա ծայրահեղությունների մարդ է, ուրեմն և վստահորեն նրա վրա հենվել չի կարելի, նրա այսօրվան պաշտամունքի և վաղվանի միջև ցատկումներն էլ միշտ հնարավոր են, այսօրվան աստվածներին նա միշտ էլ կարող է գալաճանել և որդեգրվել ուրիշ աստվածների և միշտ էլ նրա հողու և մտքի մեջ կգտնվեն յուր այդ քայլը գովաբանելու, արդարացնելու համար պաշտպանողական խոսքեր»<sup>44</sup>: Բայց մենք հարցնում ենք՝ միթե՞ դասալքություն է, երբ պատանին՝ դեռևս անդիտակից հայտնվելով եկեղեցու և հոգեորականների մեջ, ինչպես Սիրաքյանի («Դարձ») կամ Աբեղայի («Հին Աստվածներ») գեպքում է, ըմբռնելով իր իսկական կոչումը հրաժարվում է իր նախկին կոչումից: Իհարկե՝ ո՞չ:

Յ.Նիշշեի նման Լ. Շանթը նույնպես կոչ է անում վեր կանգնել բոլոր պլայմանականություններից, արժեկություններից, կանգնել «բարուց և չարից անդին», եթե դանկանում ենք իրականությունը տեսնել այնպես, ինչպես որ այն կա. «Մարդը միանդամայն անկատար իր է..., մարդն ինչ-որ բան է, որը սկետք է հաղթահարվի... Բոլոր էակները ցարդ մի բան ստեղծել են իրենցից վեր...»<sup>45</sup>, բնականաբար, մարդը նույնպես սկետք է ստեղծի մի բան, որը գերազանցելու է իրեն... Շանթը խորապես հավատում էր, որ կարելի է հասնել մարդկային անհատի և հասարակության, հետևաբար նաև հայ անհատի և հայ հասարակության բարձրացմանը, բնադանցական ամեն կարդի նախապաշտպումներից և մարդկային տկարություններից անհատի աստիճանական ազատագրման, իր ներքին թշնամիներին հաղթահարելու շնորհիվ: Մարդկային անհատը ձգտում է «Երազ բարձունքներու կապույտին: Համառորեն բարձրանալ, փույլթ չէ թե նպատակակետը հետան: Անցնիլ լեռ մըն ալ, մաղլցիլ ժայռեր, վտանգավոր ու մահացու: Զդտիլ, ինչ փույլթ թե կարելի չըլլա հասնիլ: Իմաստը կյանքին կր կայանա

<sup>42</sup> Յ. Ն ի ց շ ե. նշվ. աշխ., էջ 373:

<sup>43</sup> Մ. Ի շ իւ ա ն. նշվ. աշխ., էջ 90:

<sup>44</sup> Ա. Տ ե ր ա լ ի ւ ա ն. Լեւոն Շանթ. Աչորի եւ դասալքութեան երգիչը. Վաղարշուապատ, 1913, էջ 19-20:

<sup>45</sup> Յ. Ն ի ց շ ե. նշվ. աշխ., էջ 37:

անդուլ անդադար ձգտելու մեջ... առանց հասնելու գագաթը՝ Եթե հաջողի մարդ ավարտել նախաձեռնությունը, հարկ է քանդել, վերստին սկսելու համար»<sup>46</sup>:

Շանթի համար «մարդը մտածող եղեգ մըն է», հետևաբար, բույսից և անասունից նա տարբերվում է իր բանականությամբ, նպատակասլաց իր գործունեությամբ, որը չի սահմանափակվում միայն կառուցումով, որովհետև այն մի դործընթաց է, որը եթե անգամ ունի սկիզբ, ապա չունի վերջ, որովհետև վերջ չունի կատարելության ճանապարհը...«Հին աստվածների» Վանահայրը, որի կերպարի մեջ առկա է նաև Նիցշեի Զրադաշտը, ասում է. «Մարդս ի՞նք միայն կընա շինել իր Աստծուն նվիրված տաճարը, ի՞ր մեջքովը, ի՞ր ձեռքերովը, ի՞ր խելքովը»: Անընդհատ, առանց ավարտի...«Կուզեիր, որ վերջ ունենալ: Քանի կապրինք շինենք պիտի. սիրտի շինենք մեր Աստծուն իր տաճարը. շինենք ու փիլի, շինենք ու քանդենք, շինենք ու շինենք միշտ, բայց երբեք, երբեք չավարտենք: Հենց որ ավարտի, ալ տաճար, չէ Աստծու, այլ... կոատուն»<sup>47</sup> (ընդգծ.՝ Յու. Հ.): Ինքը պիտի հաղթահարի մատուցի անգնի իր ճանապարհը, ինքը պիտի հանցնի իր ճանապարհը, ինքը պիտի հաղթահարի իր անապատը, որովհետև յուրաքանչյուրի անապատը իր անապատն է, միայն իրեն հատուկ փուշ ու տատասկով, իր դժվարություններով, հետևաբար նաև հաղթահարումի պատճառած մեծ հաճույքներով: Ինքը պիտի կատարելագործի իր էությունը և ձգտի դեպի վեր...«Պետք է, որ գուն անգամ մը գոնե տենչչաս ու չունենաս, ձգտիս ու չհասնիս, ծարավիս ու չհագենաս: Կուզեմ որ գոնե անգամ մը չհասնիս Պետքար լեռան դագաթը»<sup>48</sup> (ընդգծ.՝ Յու. Հ.), որպեսզի շուրջու միայն դիակներ չտեսնես, որ քեզ չթվա, «թե խեղճ բան մըն է այս բոլորը և չի արժեր ոչինչ»: «Պետքար լեռան» գագաթը ցանկալի է, ինչպես ցանկալի է «նվաճված» ամեն գագաթ, սակայն այդ գագաթներին հասնելու համար պիտի «Հասունանալ տառապանքով», ինքնահաղթահարմամբ, ինքնամաքրումով... Որովհետև, բարձրացողը նայում է վերև, մինչդեռ նա, ով բարձրացել է, ներքեւ է նայում...

## ФИЛОСОФИЯ ЖИЗНИ ЛЕВОНА ШАНТА

ЮРИЙ ОВАКАНЯН

Р е з ю м е

Левон Шант – один из ярких представителей армянской культуры XX века. Он писатель, драматург, педагог, философ и общественный деятель одновременно. Его художественное наследие до сих пор не изучено как следует. Тем

<sup>46</sup> Օ. Թ ո փ ո ւ զ ե ա ն. նշվ. աշխ., էջ 88:

<sup>47</sup> Լ. Շ ա ն թ. նշվ. աշխ., էջ 428:

<sup>48</sup> Լ. Շ ա ն թ. նշվ. աշխ., էջ 496:

более не изучена его философия, что связано с идеологическими соображениями. Его философское мировоззрение развивалось, с одной стороны, по традиции армянской культуры, а с другой стороны – европейской философской культуры, в особенности, под влиянием "индивидуализма" и "поклонения силе" философии Ф. Ницше, а также по принципу абсолютизма Г. Ибсена "Все или ничего". Как замечает западноармянский писатель М. Ишхан, "философия Шанта не является "книжной" и "приобретенной" в процессе учебы", она представляет позитивный образ мыслей, возникший в процессе созерцания природы. В основе его философии – жизнь. Жизнь такая, какая она есть. Всегда стремление и борьба, цель которой – это победа над собой и формирование сильной личности сверхчеловека: "Нужно беспрерывно сражаться, не отступая, не отступая, до "достижения цели", упорно подниматься. Смысл жизни состоит в нескончаемом беспрерывном стремлении, при этом не достигая вершины. "Если ты достиг цели, закончил строить свою церковь, то нужно ее разрушить, для того, чтобы вновь и вновь строить. Страйте и разрушайте, стройте и стройте всегда, но никогда, никогда не заканчивайте строить ее. Когда закончите строить, то это уже не будет церковь... а капище".

#### PHILOSOPHY OF LIFE OF LEVON SHANT

*YURI HOVAKANYAN*

#### S u m m a r y

Levon Shant is one of the brightest representatives of the 20th century Armenian culture. He was a writer, a dramatist, a teacher, a philosopher, and a statesman at the same time. His rich cultural heritage has not been properly investigated yet. Even more, his philosophy hasn't been investigated which was connected with ideological considerations. His philosophical views on social reality were formed on the basis of Armenian reality and Armenian culture on the one hand and European philosophical literature on the other hand, especially, F. Nietzsche's "Honouring personality" and "Honouring strength" in philosophy, H. Ibsen's "Everything or nothing", the Principle of honouring everything. Nevertheless, as Western Armenian writer M. Ishkhan mentioned, Shant's philosophy was not "book-knowledge and book-science", but positive meditation through the nature. Life was in the foundation of his philosophy. Life in its sense is an endless yearning for fight, clearness of purpose and victory over himself and great personality- the creation of a superman. "One must fight endlessly and endlessly, go ahead, without turning back" and not yield up to the "top of the aim" and purpose, persistently go up "Even if it is impossible to reach. The sense of life is in the endless yearning...without reaching the top", but if you have got it and built it you have finished the temple of your God, then destroy it in order to build again. "Build and destroy and never stop, whenever it is constructed it is not the temple of God, but... a council".